Դեսպան Յամադայի այցը Սպիտակ քաղաք երկրաշարժի 30-րդ տարելիցի կապակցությամբ

Սպիտակի աղետալի երկրաշարժի[1] 30-րդ տարելիցի կապակցությամբ դեկտեմբերի 7-ին, Ճապոնիայի երկրաշարժին և Սպիտակի երկրաշարժին նվիրված խաչքարերի մոտ տեղի ունեցավ հիշատակի արարողություն: Ներկա են գտնվել ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան Յամադան, Չեխիայի և Լեհաստանի դեսպանները, արտակարգ իրավիճակների նախարարության փոխնախարար Նազարյանը, Սպիտակի քաղաքապետ Գագիկ Սահակյանը, Սպիտակ քաղաքի փրկարարական ծառայության պետ, փոխգնդապետ Սերոբ Գաբրիելյանը (ում գաղափարով տեղադրվել է Ճապոնիայի երկրաշարժի զոհերին նվիրված խաչքար) և բազմաթիվ քաղաքացիներ:

Խաչքարին ծաղկեմատույցի արարողությունից հետո քաղաքապետարանում տեղի ունեցավ զոհերի հիշատակին նվիրված համերգ: Դեսպանը շնորհակալություն հայտնեց Սպիտակի քաղաքացիներին ամեն տարի զոհերի հիշատակման արարողություն անցկացնելու համար և նշեց նաև Ճապոնիայի՝ Հայաստանի հետ աղետների կանխարգելման ոլորտում համագործակցությունը զարգացնելու պատրաստակամությունը, քանի որ Հայաստանը նույնպես սեյսմավտանգ երկիր է:

Երկրաշարժի զոհերին նվիրված խաչքար

ԱԻՆ փոխգնդապետ Սերոբ Գաբրիելյանը, դեսպան Յամադան և Քաղաքապետ Սահակյանը

Հիշատակի արարողություն

Սպիտակի բնակիչները

Սպիտակի բնակիչները

Ճապոնիայի երկրաշարժի զոհերին նվիրված խաչքար

Դեսպան Յամադան

Քաղաքապետ Սահակյանի խոսքը

Դեսպան Յամադայի խոսքը

ԱԻՆ-ի հրշեջ մեքենաները

ԱԻՆ-ի աշխատակիցների հետ

Սպիտակ քաղաքի ԱԻՆ-ի աշխատակիցների հետ

1. 1988 թ. Դեկտեմբերի 7-ին էպիկենտրոնից ոչ հեռու Սպիտակ քաղաքում 6,8 բալ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել, որի արդյունքում բնակչության 1/3-ը՝ շուրջ 4000 մարդ զոհվել է, ոչնչացվել է քաղաքային արդյունաբերությունը: Երկրաշարժից հետո Ճապոնիան օգնություն է ցուցաբերել:

Դեսպանության աջակցությամբ ժամանակավոր տնակներում ապրող երեխաների և 58 ուսուցիչների համար բարելավվել է 350 ուսումնական միջավայր: Իրականացվել են բնական գազի մատակարարման բարելավման և արևային էներգիայի կայանների կառուցման ծրագրեր:

Նախորդ տարվա զոհերի ոգեկոչման արարողությունը տես հետևյալ հղումով: